ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 31 » հունվարի 2024թ. № 103

ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով, որ «Գոռ Նիկողոսյան Քաջայրի» անհատ ձեռնարկատերը 2024 թվականի հունվարի 31-ին ներկայացրել է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տրամադրելու հայտեր, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն արտաքին գովազդ տեղադրելու թույլտվությունը տրամադրում է համայնքի ղեկավարը, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի «դ» կետի համաձայն վարչական մարմնի պաշտոնատար անձն իրավունք չունի քննարկելու և լուծելու գործը, եթե նա վարույթի մասնակիցներից որևէ մեկի կամ նրա ներկայացուցչի ազգականն է՝ զավակը, ծնողը, հարազատ հայրը կամ մայրը, եղբայրը կամ քույրը կամ նրանց զավակը, հորեղբայրը կամ հորաքույրը կամ նրանց զավակը, մորեղբայրը կամ մորաքույրը կամ նրանց զավակը, ամուսինը (ընդ որում, ամուսնալուծության փաստը սույն կետով նախատեսված հիմքը բացառող հանգամանք չէ), փեսան, հարսը, ամուսնու ծնողները կամ նրանց զավակը կամ եղբայրը կամ քույրն է, և քանի որ ես՝ որպես Սպիտակ համայնքի ղեկավար, իրավունք չունեմ ընդունելու որդուս՝ Գոռ Քաջայրի Նիկողոսյանին, արտաքին գովազդի թույլտվություն տրամադրելու մասին որոշում՝ ***որոշում եմ.***

1. Հայտնել ինքնաբացարկ որդուս՝ Գոռ Քաջայրի Նիկողոսյանին, արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տրամադրելու վարչական վարույթի շրջանակներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հունվարի 31
ք.Սպիտակ